МИНИСТЕРСТВО ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ И ИНФРАСТРУКТУР РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАО "ВЫСОКОВОЛЬТНЫЕ ЭЛЕКТРОСЕТИ"
ГЕНЕРАЛЬНЫЙ ДИРЕКТОР

0084 Армения, Ереван, ул. З. Андраника 1
Тел. 060 38 00 01

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION AND INFRASTRUCTURES OF THE REPUBLIC OF ARMENIA
"HIGH VOLTAGE ELECTRIC NETWORKS" CJSC
GENERAL DIRECTOR

0084 Armenia, Z. Andranik st.1, Yerevan
Tel: 060 38 00 01

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
0084, Հայաստան, Երևան, Զ. Անդրանիկի 1,
Հեռ. 060 38 00 01
Էլ. հասցե: hven@hven.am, www.hven.am

No._____

«30» ապրիլի 2024թ.

«ԳԵՂԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳՍԻ» Ա/Ձ-ԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ
(Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

Հարգելի պարոն Սարգսյան

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար «Սարքավորումների և պահեստամասերի» ձեռքբերման նպատակով 2023 թվականի ապրիլի 27-ին հայտարարվել է «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-23/06» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ): Ընթացակարգի արդյունքում 1-3-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչված «ԳԵՂԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳՍԻ» Ա/Ձ-ի հետ (այսուհետ՝ Մասնակից) հետ 2023 թվականի հունիսի 08-ին կնքվել է «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-23/06»-1 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված N 1-ով (տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույց) 3-րդ չափաբաժնի համար ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 90 օրացուցային օր (06 սեպտեմբերի 2023 թվական), սակայն մինչ օրս 3-րդ չափաբաժնի մասով ապրանքները Ձեր կողմից չեն մատակարարվել:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է

Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները (մասնավորապես 2.1.7 կետի «բ» պարբերությունը)՝ տեղեկացնում եմ, որ Պատվիրատուն միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ Մասնակիցը վճարում է Պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա Պատվիրատուն Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին: Հակառակ դեպքում Մասնակցի նկատմամբ կիրառվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված դրույթները:

Հարգանքով՝

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԴԱՎԻԹ ՄԻՐԶՈՅԱՆ

Կատարող՝ գնումների և մատակարարման բաժնի գլխավոր մասնագետ
Մելինե Սողոյան, հեռ. 060380040